

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2008թ. մայիսի 6-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ա. Պետրոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի զբոսաշրջության մրցումակության երկրորդ համաժողովին,
- ✓ 2008թ. մայիսի 14-15 ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Գավթյանը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ա. Պետրոսյանը և առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների մրցումակության և ինովացիայի համաժողովին,
- ✓ 2008թ. մայիսի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ընդդեմ գենդերային բռնության հարավային Կովկասում» թեմայով սեմինարին,
- ✓ 2008թ. մայիսի 20-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Վարդանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի պետ Ա. Ավագյանը, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը, գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը, առաջատար մասնագետ Լ. Պարոնյանը, առաջին կարգի մասնագետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Գյուղատնտեսական համատարած հաշվառում Հայաստանում/Ընդհանուր աշխատանքային պլանի և քարոզարշավի մշակման աշխատանքային սեմինարին,
- ✓ 2008թ. հունիսի 20-ին ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի ռեսուրս կենտրոնի և վերանորոգված մասնաշենքի բացման արարողությանը,
- ✓ 2008թ. հունիսի 24-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ քաղաքացիներին ԵՄ անդամ երկրներ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացման վերաբերյալ սեմինար-փորձագիտական հանդիպմանը,
- ✓ 2008թ. հունիսի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Մաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տարվա լավագույն եվրոպացին» մրցանակների բաշխման արարողությանը: